ՀՏԴ 929:891.981.09 Իսահակյան + 800
Doi:10.54503/0135-0536-2024.3-263

ԱՎԵՏԻՔ ՎԻԳԵՆԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ
(Ծննդյան 80-ամյակի առթիվ)*

Լրացավ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրենի խորհրդական, տեքստաբանության բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Ավետիք (Ավիկ) Վիգենի Իսահակյանի ծննդյան 80-ամյակը:

Ա. Իսահակյանը գիտակցական ողջ կյանքը նվիրել է գրականագիտությանը՝ առաջնորդվելով ոչ միայն դեպի գրականությունը ցուցաբերած հետաքրքրությամբ, այլև պապի՝ Ավետիք Իսահակյանի հանդեպ տածած պաշտամունքով, որ պատանեկան տարիներից ձևավորվել էր նախ Վարպետի կողքին գտնվող հարազատների վերաբերմունքից, բազում ընկերների, անվանի մարդկանց խորագույն հարգանքից, ապա նաև բանաստեղծի համաժողովրդական ընդունելությունից:

Մասնագիտական ճանապարհն Ա. Իսահակյանի համար ի վերուստ էր նախանշված: Իսահակյանների՝ ներքին կուլտուրա ունեցող բարձրաճաշակ մտավորականների՝ մեզ հայտնի երեք սերունդը՝ Ավետիք, Վիգեն, Ավիկ, գրական ձիրքի բնատուր տաղանդը ժառանգել էր Արծրունիների իշխանական տոհմի իրենց մեծ հորից՝ հին Բայազետում ծնված, ապա 1828 թ. Արևելյան Հայաստանում՝ Շիրակում հանգրվանած հասարակական-ազգային գործիչ ու բանահավաք Նիկողայոս Իսահակյանից: Երեքն էլ ունեն ազնվական նույն կեցվածքը՝ լուսավոր ժպիտով ու մարդկային հոգին թափանցող, նաև՝ տիեզերական անհունները թևածող արծվային հայացքով:

Ա. Իսահակյանը ծնվել է Երևանում 1944 թ. նոյեմբերի 27-ին: 1967 թ. ավարտելով Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի լրագրողական բաժինը՝ ընդունվում է ասպիրանտուրա, ապա՝ գործուղվում Մոսկվա՝ ուսումնառությունը շարունակելու ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտում: Վերադառնալով՝ 1971–1972 թթ. աշխատում է Ավ. Իսահակյանի երևանյան տուն-թանգարանում, 1973–1978 թթ.՝ ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտում: 1978 թ. ընդունվում է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ իբրև ավագ գիտաշխատող և աշխատում մինչ օրս՝ 1989 թ. ղեկավարելով ինստիտուտի տեքստաբանության բաժինը, 2008–2015

---

* *Ներկայացվել է 15. XI. 2024 թ., ընդունվել է տպագրության 21. XI. 2024 թ.:*

թթ.՝ նաև ինստիտուտը՝ իբրև տնօրեն: 2013–2022 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի տնօրենը: 1986–1988 թթ. համատեղության կարգով նա կատարել է նաև Հայաստանի գրականության և արվեստի պետական թանգարանի տնօրենի պարտականությունները:

1972 թ. եղել է ԽՍՀՄ ժուռնալիստների միության, 1977 թվականից՝ Հայաստանի գրողների միության անդամ:

Վարչական, գիտահետազոտական աշխատանքներին զուգահեռ՝ Ա. Իսահակյանը դասավանդել է հանրապետության բուհերում՝ 1974–1994 թթ., 2000–2008 թթ.՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, 1999–2009 թթ.՝ Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանում: Դասախոսություններ է կարդացել նաև Սորբոնի և Լոս Անջելեսի համալսարաններում:

Ա. Իսահակյանի հասարակական և գիտական գործունեությունն ըստ արժանվույն է գնահատվել՝ ՀԽՍՀ ԳԱ նախագահության «Գովասանագիր» (1985 թ.), ՀՀ ԳԱԱ «Պատվոգիր» (2004 թ.), ՀՀ ԳԱԱ նախագահության «Մեծարման գիր» (2019 թ.), ՌԴ «Ալեքսանդր Պուշկին» պետական մեդալ (2013 թ.), ՌԴ ԱԳՆ Գրիբոյեդովի անվան մեդալ (2012 թ.), «Մովսես Խորենացի» (2019 թ.), «Գրիգոր Նարեկացի» (2015 թ.), «Ավետիք Իսահակյան» (2012 թ.), «Հովհաննես Թումանյան» (2019 թ.), «Ֆրիտյոֆ Նանսեն» (2012 թ.), «Վալերի Բրյուսով» (2010 թ.), ՀՀ ՊՆ «Գարեգին Նժդեհ» (2009 թ.) մեդալներ, Երևանի քաղաքապետի ոսկե մեդալ (2018 թ.): 2012 թ. ՀՀ նախագահի հրամանագրով արժանացել է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ կոչման: Պարգևատրվել է «Վարպետ» ոսկյա հուշամեդալով (2010 թ.), արժանացել Գյումրի քաղաքի «Պատվավոր քաղաքացի» կոչման (2012 թ.):

Ա. Իսահակյանը հեղինակ է 16 մենագրությունների և գրքերի, 300-ից ավելի գիտական հոդվածների: Գրականագետի ուսումնասիրությունները և կազմած ժողովածները տպագրվել են Երևանում, Մոսկվայում, Վենետիկում, Փարիզում, Լոս Անջելեսում: Նրա գիտական խմբագրությամբ լույս են տեսել երկու տասնյակից ավելի գրքեր:

Ա. Իսահակյանը եղել է դոկտորական, թեկնածուական ատենախոսությունների պաշտոնական ընդդիմախոս ու փորձագետ: Հաջողությամբ ղեկավարել է թեկնածուական մի քանի ատենախոսություններ և 2014 թ. ՀՀ ԲՈՀ-ի կողմից ստացել պրոֆեսորի կոչում:

Անդրանիկ աշխատությունը, որի համար Ա. Իսահակյանը 1973 թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան, նվիրված է Վարպետի արձակին: Խոր, բազմակողմանի ուսումնասիրությունն աչքի է ընկնում նուրբ ու խորաթափանց մեկնաբանություններով, ազգային-քաղաքական գործոնների ազդեցությունների վերհանումով: Մինչ այդ երիտասարդ հետազոտողն արդեն իսկ կազմել և հրատարակել էր Վարպետի ժառանգությունից մի քանի գրքեր, հոդվածներ:

Դոկտորական ատենախոսությունը՝ «Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը» խորագրով, պաշտպանել է 1987 թ. ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում: Աշխատության մեջ ցույց է տրվում Ա. Իսահակյանի կապը ռուս իրականության, նրա ստեղծագործության աղերսնե-

ը ռուս դասականների երկերի հետ: Մենագրությունը 1988 թ. տպագրվեց Մոսկվայում ռուսերեն՝ «Ավետիք Իսահակյանը և Ռուսաստանը» վերնագրով (304 էջ): Հետագայում ևս գրականագետը հետևողական եղավ՝ ներկայացնելու ռուս գրաքննադատական մտքի կողմից Իսահակյանին տրված գնահատականները, Իսահակյանի ընորոշումները Ռուսաստանի և ռուս մշակույթի մասին, Իսահակյանի կատարած թարգմանությունները ռուսական պոեզիայից, զբաղվեց բանաստեղծի երկերի ռուսերեն հրատարակությամբ:

Որպես հետազոտող՝ Ա. Իսահակյանն ի սկզբանե իր առջև խնդիր էր դրել գիտական շրջանառության մեջ դնել Վարպետի ձեռագրերը, մանավանդ՝ անտիպները, ներկայացնել նրա՝ իրադարձություններով, հանդիպումներով հարուստ կյանքը, աշխարհայացքի, բանաստեղծական հանճարի ձևավորման ընթացքը, բանաստեղծական խառնվածքի իշխող գծերը, ստեղծագործության ներքին շերտերը, էական հատկանիշները, ինքնատիպ մտածողության առանձնահատկությունները: Ա. Իսահակյանի ընորոշմամբ՝ Վարպետի ստեղծագործությունն ազգային ոգու և ազգային ոճի ներդաշնակության կատարյալ օրինակ է՝ սկսած առաջին «Երգեր ու վերքեր» գրքույկից՝ Իսահակյանի պոեզիայի ատոմի միջուկից (Ա. Ի ս ա հ ա կ յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, հ. 1, Երևան, 2003, էջ 23):

Ա. Իսահակյանի բանաձև-ընորոշումները դիպուկ են, ուղենիշային և կարող են հենք հանդիսանալ նոր ուսումնասիրությունների համար: Այսպես՝ «Ավետիք Իսահակյանի պոեմները» մենագրության մեջ (2007 թ., 242 էջ) գրականագետը գրում է, որ հայ պոեզիայի ամենաառեղծվածային երկերից մեկը՝ «Սասմա Մհեր» պոեմ-էպոսը, հայոց պատմության ծածկագիրն է (էջ 167), «Աբու-Լալա Մահարին»՝ անհաղթահարելի վերին սահմանագիծ՝ զգացումի և մտքի, խոհի և ալեգորիայի, պատրանքի և իրականի կատարյալ ներդաշնակությամբ (էջ 237), «Ալագյազի մանիները»՝ ժանրային իմաստով պոեմ-բանաստեղծություն, մեղեդային-պատումային իմաստով՝ օպերա-պոեմ, բնության պատկերների զորեղ ներկայացմամբ՝ գեղարվեստական պանո-պոեմ, որին կարող ես անվանում տալ՝ «Սա է Հայաստանը» (էջ 31): «Իմ կարավանը»՝ պոեմ-խորհրդածություն՝ մարդկային հոգու բավիղները բացահայտող յուրահատուկ բանալի (էջ 234):

Ավետիք Իսահակյանի պոեմներին անդրադարձել են բազմաթիվ ուսումնասիրողներ, սակայն առանձին հոդվածներով: Ավիկ Իսահակյանը գրել է պոեմներին նվիրված մենագրություն՝ Վարպետի ստեղծագործական ողջ լաբորատորիան ուսումնասիրելուց հետո («Ավետիք Իսահակյանի պոեմները»): Փաստագրական և արխիվային նյութերի հիման վրա հետազոտողը հանգամանորեն ներկայացնում է պոեմների ստեղծագործական պատմությունը, մտահղացման ազդակները, այլ երկերի հետ ունեցած հոգևոր արձագանքները: Անդրադարձ է կատարվում պոեմների ժանրային առանձնահատկություններին, ինքնատիպ կերպարներին, պոետական արվեստի կատարելությանն ու լեզվին: Պոեմը դիտվում է Իսահակյանի բանաստեղծական հանճարի զորեղ դրսևորումներից մեկը և խոհափիլիսոփայական հայացքների խտացված արտահայտությունը:

Ա. Իսահակյանի կողմից առանձնահատուկ ուշադրության են արժանանում Վարպետի աֆորիզմները: Պոեմներին նվիրված ուսումնասիրության մեջ ար-

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2024 № 3

դեն ընդգծվել էր, որ Իսահակյանը սեղմ, հակիրճ, աֆորիստիկ բնույթի բանաստեղծության ջատագով է (էջ 239): Իսահակյանը համաշխարհային գրականության մեջ լայն տարածում ստացած ժանրի՝ աֆորիզմի հազվադեպ կիրառողներից է հայ գրականության մեջ: Սակայն նա իր կենդանության օրոք չէր հասցրել դրանք հավաքել մեկ ժողովածուի մեջ:

Ձկատարված ցանկությունն իրագործում է Ա. Իսահակյանը՝ բազմաթիվ ձեռագրերից դուրս բերելով և առանձին ժողովածուով տպագրելով Վարպետի բյուրեղացած մտքերը թեմատիկ դասավորությամբ՝ Հայաստանը և հայ ժողովուրդը, Հայկական հարցը, արվեստը և գրականությունը, փիլիսոփայական խորհրդածություններ, խոստովանական մտորումներ (Իսահակյան Ա., Աֆորիզմներ, 2001 թ., նաև ռուսերենը՝ 2019 թ.):

Ընթերցողը և հետազոտողը Իսահակյան մարդու, ստեղծագործողի, նրա ապրած ժամանակի և գրական ժառանգության մասին ամբողջական պատկերացում կազմեց «Բարև՛, Վարպետ» (2008 թ., 840 էջ) հոդվածների ընտրանու հավաքածուի շնորհիվ:

Ընթերցող լայն շրջանակներին էր ուղղված նաև Ա. Իսահակյանի «Վերնատան զավակները» գիրքը (2017 թ., ռուսերենը՝ 2018 թ.): Գրքի կառուցվածքային մտահղացումը բխում է XX դարի սկզբին Թիֆլիսում գործող հայ առաջին գրական խմբակի ընթացքը ճիշտ ներկայացնելու, վերնականների ունեցած դերն ու առաքելությունն ընդգծելու միտումից: Հատվածների բնութագիր-խորագրերը՝ «Վերնատան նահապետը», «Վերնատան կանթեղը», «Վերնատան հայդուկը», ««Նվեր Վերնատան» հեղինակը», «Վերնատան թատրերգակը», «Վերնատան տեսաբանը», գծագրում են Ղազարոս Աղայանի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Դերենիկ Դեմիրճյանի, Լևոն Շանթի, Նիկոլ Աղբալյանի դիմանկարները: Նամակներից, հուշերից բերված հատվածների, հղված բանաստեղծական տողերի, վերլուծությունների, նաև ընտրված բնաբանների միջոցով տրվում է Վերնատան անդամների և Վերնատան գործունեության նկարագիրը: Մեր գրականության մեջ նրանց մնայուն լինելու գաղափարն է շեշտում «Վերնատնից հավերժություն» խորհրդանշական խորագիրը:

Վերջին երկու տասնամյակում Ա. Իսահակյանի ղեկավարությամբ Գրականության ինստիտուտում իրականացվում է բանաստեղծի երկերի ակադեմիական հատորների կազմման և հրատարակության ծրագիրը: Նախատեսված 14 հատորներից արդեն տպագրվել են 12 հատորները, որոնք ներառում են Իսահակյանի ստեղծագործությունն ամբողջությամբ՝ տպված և անտիպ ճշգրտված տեքստեր՝ իրենց տարբերակներով ու բնագրային տարընթերցվածներով: Ակադեմիական հատորների գիտական ծանոթագրությունները վերաբերում են երկերի գրվելու ժամանակին ու վայրին, տպագրությանը, գրության հանգամանքներին, կիրառված հատուկ անուններին: Բացատրվում են բառեր, տեղեկություններ են տրվում պատմական անձերի և իրադարձությունների մասին:

Նմանատիպ ծավալով և ընդգրկումով աշխատանք կատարելու համար նախևառաջ ի մի բերվեց բանաստեղծի գրական արխիվը. նյութերը պահվում են Հայաստանի գրականության և արվեստի թանգարանի Իսահակյանի ֆոնդում, Իսահակյանի երևանյան տուն-թանգարանի ֆոնդում, ընտանեկան արխիվում, Հայաստանի և արտերկրի հայագիտական տարբեր կենտրոններում:

Հավաքչական աշխատանքների ընթացքում, օրինակ, պարզ դարձավ, որ «Ուստա Կարո» վեպի երկրորդ տարբերակն ունի բազմաթիվ մշակումներ, և դրանց հրատարակումը չի կարող սահմանափակվել մեկ կամ երկու հատորներով: Աշխատանքներին զուգահեռ հետազոտվում են նաև բանաստեղծին նվիրված բոլոր հրապարակումները, այդ թվում՝ մամուլում տպագրվածները:

Ա. Իսահակյանը ոչ միայն հաջողությամբ իրականացնում է կազմակերպական աշխատանքները, այլև մասնակցում է յուրաքանչյուր հատորի կազմմանը, ծանոթագրությունների պատրաստմանը, խմբագրում հատորները: Կցված վերջաբանները թույլ են տալիս փաստելու, որ Վարպետի և նրա ստեղծագործության հանդեպ ունեցած խորունկ ակնածանքը, որ դրսևորվում է գնահատումի և արժևորման բազմաթիվ խոսքերում, բխում է Իսահակյան մարդու և նրա ստեղծագործության, հայ ու համաշխարհային գրականության խորքային իմացությունից: Վեր են հանվում Իսահակյանի պոեզիայի և արձակի օրինաչափությունները, ցույց են տրվում պոետական արվեստի կատարելությունը, մտածելակերպի ժողովրդայնությունը, ստեղծագործության խոհափիլիսոփայական ուղղվածությունը, հարատևող մոտիվները, Իսահակյանի ներաշխարհի հարստությունը, մտածողության սկզբունքները, խոսքի հյութեղությունը, անմիջականությունն ու անկեղծությունը:

Ակադեմիական հատորներից զատ՝ Ա. Իսահակյանը զբաղված է բարդ ու աշխատատար ևս մեկ գործով: Վարպետի ծննդյան 150-ամյակին ընդառաջ՝ նա պատրաստում է բանաստեղծի գիտական կենսագրության երկրորդ գիրքը, որն ընդգրկում է 1900–1912 թվականները: 2000 թ. տպագրված գիտական կենսագրության առաջին հատորում (1875–1900 թթ.) ներառված փաստագրական նյութերը կարևոր սկզբնաղբյուրներ են ուսումնասիրողների համար՝ ճանաչելու բանաստեղծի կյանքը, այս կամ այն երկի ստեղծման ազդակները, հետևելու Իսահակյանի եվրոպական ուսումնառությանը, հասարակական, ազգային-քաղաքական գործունեությանը, տվյալ ժամանակահատվածում բանաստեղծի անձնական և ժողովրդի կյանքում տեղի ունեցած վճռորոշ դեպքերին ու իրադարձություններին:

Օրերս լույս տեսավ գիտական հանրության և ընթերցող լայն շրջանակի համար նախատեսված «Սոֆյա՝ Ավետիքի բարի հրեշտակը» գիրքը (380 էջ), որում ներկայացվում է Իսահակյանի կնոջ՝ Սոֆյա Իսահակյանի կյանքը՝ նույնպես փաստագրական նյութերի, բազմաթիվ անտիպ նամակների հիման վրա: Գրքում օգտագործված են հազվագյուտ լուսանկարներ՝ ընտանիքի հավաքածուից: Ավելորդ չէ նշել, որ Ա. Իսահակյանի հրատարակած բոլոր գրքերն են զարդարված Մարտիրոս Սարյանի կողմից արված բնանկարների, գծանկարների, դիմանկարների պատկերներով: Թվում է, թե հեղինակը դրանով ոչ միայն լուծել է գեղագիտական խնդիրներ, այլև արտացոլել է երկու հանճարեղ հայորդիների՝ տասնյակ տարիներ ձգվող խորագույն մտերմությունը, որ խարսխված էր նաև հոգևոր կապով: Ա. Իսահակյանի ձևակերպմամբ՝ «Միասին նրանք կերտել էին այս երկրի հեղինակությունն ու փառքը» («Երևանը երազում և արթմնի: Տասը տարի անց», 2023 թ., էջ 425):

Ինչպես տարիներ շարունակ, և այսօր, Ա. Իսահակյանը բերում է իր արգասաբեր ծառայությունն Ավետիք Իսահակյանի երևանյան տուն-թանգարանի գիտական գործունեությանը, մեծ Վարպետի հիշատակի հավերժացմանը:

Շնորհավորում և քաջառողջություն, մշտանորոգ կորով ենք մաղթում գալիք ծրագրերով ծանրաբեռ, Ավետիք Իսահակյանի ծննդյան 150-ամյակը 2025 թ. գիտական նոր հրապարակումներով ու միջոցառումներով նշելու աշխատանքներով բազմազբաղ վաստակաշատ գիտնականին, ով իր բարեկիրթ, համակրելի արտաքինով ու կերպարով, բացառիկ հիշողությամբ, հումորի մեծ զգացումով իր շուրջն է համախմբում մարդկանց այնպես, ինչպես իր վեպը, էսսեներն ու պատմվածքները («Սա է իմ ընտրությունը», «Սևանա կղզի», «Երևանը երազում և արթմնի: Տասը տարի անց»)՝ գրված տաք ու ջերմ շարադրանքով, մտքի ու սրտի ներքին ներդաշնակ մղումով:

ՀԵՐԻՔՆԱԶ ՈՐՍԿԱՆՅԱՆ

Բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, Գիտական հետաքրքրությունները՝ հայ հին և միջնադարյան գրականություն, հայ դասական գրականություն: Հեղինակ է 1 մենագրության և շուրջ 35 հոդվածի: ORCID:0000-0001-6682-4043. vorskanyan.heriknaz@mail.ru